ՄԾ.

Երուսաղեմի մէջ երկու բաբբիներ կը հետազօտեն, թէ արդեօք Քրիստոս աշխարհ եկած է թէ ո՛չ դեռ։ Այս խուզարկութեան ծանր հետեւանքները, զորս և ազգովին կը կրեն հոն, կը պատմուին անհ հետեւեալ վաւերագրին մէջ։

Կայ և Թաթար խանի մասին տեղեկութիւն մը։

Գերապատիւ տեառն տեառն Յակոբանենոս վրդ.ի և Աբրայ հօր մերում
համբուրելի աջոյ ողջոյն

Թուղթ փ.երդ.

ի 8 հոկ. 1764

... Պատմի ևս թէ յերուսաղէմ երկու գլխաւոր խախամք քննեալ զգիրս իմացեալ են զի անցեալ է ժամանակ գալստեան մեսիային. վասն որոյ եկեալ է մինն այսր հարցանել և իմանալ. եթէ կարիցեն աստ եղեալ ռաբբիք ցուցանել թէ դեռ չէ եկեալ մեսիայն, ապա թէ ոչ ուրեմն այն է մեսիայն զոր քրիստոնեայք ընդունին։ Իսկ սոքա մահադեղեալ զնա, գրեցին առ երուսաղէմի հրէայս, զի և զմիւս խախամն սպանցեն մարթանօք։ Եւ նոքա արարին այնպէս, այլ բանն ոչ ծածկեցաւ, զի իմացաւ չէխն. 10000 *ղուռշ խնդրեաց ի ծածկեալ զգործն, զոր ոչ կամեցեալ տալ հրէից և զչէխն ի տան յոր մտեալ էր, և գտեալ զգէշ խախամին, սպանին, և զքանի մի սպասաւորս նորա որք ընդ նմա էին։ Այս ևս յայտնեցաւ, վասն որոյ զբազումս ի գլխաւորաց հրէից սպանեալ զմնացեալսն ամենայն աքսորեցին յերուսաղէմէ. և նաեւ հրէից, որ երթայր յերուսաղէմ, ոչ գնաց յերուսաղէմ, այլ ոմանք ասեն թէ ի սելանիկ կ[ամ] ի սաքէթ երթալոց է. այլք թէ յետս դառնալոց. և կէսք, թէ ի խափայ մնացեն հրէայք։ Եւ այս ինչ հանդիպեցաւ, զի թագաւորն հազարացւոց գրեաց առ թաթար խանն գալ ի կոստանդնուպօլիս. իբրև թէ կամի ի մեծագոյն պատիւ աւագութեան հասուցանել. և յեղանել նորա ի ճանապարհ գրեաց առ եղբայր նորա կալնուլ զաթոռ նորա, և եղև այնպէս, զի ընդ անցանել նորա ըստ սահման իւր, և ընդ հասանիլ նորա ի սահման հազարացւոց առաքեցաւ յաքսորս. և թագաւորեաց եղբայր նորա ընդ նորա, որոյ էր ի սկզբանէ անտի թագաւորութիւնն. և սորա ապստամբութեամբ ասեն ժառանգեալ զթագաւորութիւնն։...*

Նուաստ ծառայ

Հոկտ. 8 1764 *Հ. Թադէոս վրդպտ.* [*Գրիգորեան*]

[*Պոլիս*]

ՄԾԱ.

Թուրք կառավարութեան և ներքին բնակչութեան միջև եղած դէպքերու շուրջ դժբախտ տեղեկութիւններ կը տրուին։

Կը պատմուի նաև Աւկնեցիներու կողմանէ եղած շարժումը և իրենց կրած հետեւանքները՝ յաջորդ երկու թղթերուն մէջն ալ։ Անպակաս է նաև խռովութիւնը Հայ Պատրիարքարանին մէջ։